ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ENPI/2014/346-956
FI N 82.036

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

# ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար

ԵՐԵՎԱՆ
2026թ.

Հատուկ նպատակների սույն ֆինանսական հաշվետվությունները սկզբնապես պատրաստվել են անգլերեն, իսկ այնուհետև թարգմանվել հայերեն ընթերցողների հարմարության համար: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

## Բովանդակություն


ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ..... Error! Bookmark not defined.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... Error! Bookmark not defined.

1. Ընդհանուր տեղեկություններ ..... Error! Bookmark not defined.
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ ..... Error! Bookmark not defined.
4. Դրամական միջոցներ ..... Error! Bookmark not defined.
5. Ֆինանսավորման աղբյուր (ԵՆԲ վարկ FI N 82.036, ԵՄ ՀՆԳ դրամաշնորի ENPI/2014/346-956) 15
6. Միջոցների օգտագործում ..... 16

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) ղեկավարությունը պատասխանատու է «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի» («Ծրագիր») 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքի («ԵՄ ՀՆԳ») կողմից՝ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված ENPI/2014/346-956 Ֆինանսավորման համաձայնագրի («Ֆինանսավորման համաձայնագիր») շրջանակներում, և Եվրոպական ներդրումային բանկի («ԵՆԲ») կողմից՝ 2014 թվականի հունիսի 27-ին ստորագրված և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող FI N 82.036 ֆինանսավորման պայմանագրով համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված <<Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով>> ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք):

Հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ ՀՏԶՀ -ի ղեկավարությունը պետք է.

- Պատշաճ կերպով ընտրի և կիրառի Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,
- Ներկայացնի տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի.
- Ներկայացնի լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվությունը 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է նաև.

- Ծրագրի ողջ ընթացքում ներքին հսկողության արդյունավետ և հուսալի համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար;
- Պատշաճ հաշվապահական գրառումների վարման համար, որոնք բավարար են ծրագրի գործառնությունները արտացոլելու և բացատրելու համար, և որոնք թույլ են տալիս նրանց երաշխավորելու, որ ծրագրի վերաբերյալ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են «ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք»-ի պահանջներին;
- Ծրագրի ակտիվների պաշտպանության համար ողջամիտ, մատչելի միջոցների ընդունման և հաստատման համար, որ ստացված միջոցներն օգտագործվել են Դրամաշնորհի մասին համաձայնագրին համապատասխան տնտեսման և արդյունավետության նկատմամբ պատշաճ ուշադրությամբ և միայն այն նպատակների համար, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորում,
- Խարդախության և այլ սխալների կանխարգելման և բացահայտման համար:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար ստորագրվել են Ծրագրի ղեկավարության կողմից 2026 թվականի հունվարի 30-ին:

Սարգիս Բաղինյան
ՀՏԶՀ Գործադիր Տնօրեն

Կարինե Շահբազյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման վարչության պետ

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի («ՀՏԶՀ») ղեկավարությանը*

*Վերապահումով կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքի («ԵՄ ՀՆԳ») կողմից ENPI/2014/346-956 ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում (ստորագրված 2014 թվականի օգոստոսի 6-ին («Ֆինանսավորման համաձայնագիր», «Ծրագրի համաձայնագիր»)) և Եվրոպական ներդրումային բանկի («ԵՆԲ») կողմից FI N 82.036 ֆինանսավորման պայմանագրի շրջանակներում («Ֆինանսավորման պայմանագիր», «Ծրագրի համաձայնագիր») կնքված 2014 թվականի հունիսի 27-ին և իրականացված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի («ՀՏԶՀ») կողմից) ֆինանսավորվող «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի» («Ծրագիր») կից հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում ներկայացված հարցի հնարավոր ազդեցության, կից հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի դրամական միջոցների մուտքերն ու վճարումները 2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար՝ <<Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով>> ՀՀՀՀՄ ստանդարտի և համապատասխան Ֆինանսավորման համաձայնագրի և Ֆինանսավորման պայմանագրի համաձայն: Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրամադրված Ծրագրի միջոցները, բոլոր էական առումներով, օգտագործվել են Ֆինանսավորման համաձայնագրի և Ֆինանսավորման պայմանագրի կիրառելի պայմաններին և դրույթներին համապատասխան:

*Վերապահումով կարծիքի հիմք՝ շրջանակի սահմանափակում*

Համաձայն 2024 թվականի դեկտեմբերի 25-ին ստորագրված «Ծրագրային հաշիվների և ծախսերի ֆինանսական աուդիտի մասին» պայմանագրի Հավելված Ա-ի պահանջների (Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակ) «Աուդիտի շրջանակը չի ներառում ԵՆԲ միջոցներից կատարված վճարումները «Արարատյան պոմպակայանում 3 նոր պոմպերի տեղադրման», «Բալահովիտ համայնքի գերեզմանատնից մինչև զորամասի բազմահարկ շենքերը խողովակաշարի անցկացման, նոր խողովակաշարին սպառողական խողովակաշարերի միացման և մինչև սահմանազատման կետը ջրաչափերի փոխարինման», «Փիրումյան շրջանի ջրամատակարարման ցանցի կառուցման», «Նոր Խարբերդի և հարակից տարածքների տների ջրամատակարարման ցանցի վերակառուցման և անհատական միացումների փոխարինման», ինչպես նաև դրանց հետ կապված խորհրդատվական ծառայությունների և ցանկացած այլ բաղադրիչի համար, որը դուրս է ծրագրի սկզբնական շրջանակներից և իրականացվում է ԵՆԲ-ի կողմից»:

Վերոնշյալ նախագծերի համար ԵՆԲ վարկի միջոցներից կատարված և աուդիտ չանցած վճարումների գումարը կազմել է 490,105 ԱՄՆ դոլար (նախորդ ժամանակահատվածում՝ 2,626,190 ԱՄՆ դոլար, կուտակային՝ 3,116,295 ԱՄՆ դոլար): Այս գումարը ներառված է ԵՆԲ թիվ 82.036 վարկի «Միջոցների օգտագործում» բաժնի «Փաստացի ամփոփ տվյալներ 31.12.2025 թվականի դրությամբ» բաժնում ներկայացված 6,902.986 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի մեջ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ

նկարագրված է սույն եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և Կազմակերպությունից համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային հիմունքով հաշվետվությունների պատրաստում*

Առանց մեր կարծիքը ձևափոխելու Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ նշվում է, որ այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային սկզբունքով և, հետևաբար, կարող են հարմար չլինել այլ նպատակներով օգտագործման համար:

*Հանգամանքի շեշտադրում – Ծրագրի ավարտ*

Առանց մեր կարծիքը ձևափոխելու Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 1.5-ին, որտեղ նշվում է, որ Ծրագիրն ավարտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ:

***Այլ հարցեր՝ նախորդ ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ***

Մենք աուդիտի ենք ենթարկել Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները 2015 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, և 2025 թվականի դեկտեմբերի 17-ի մեր աուդիտորական եզրակացությունում մենք արտահայտել ենք վերապահումով կարծիք այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, քանի որ անկարող էինք ստուգել, թե արդյոք գնումներն իրականացվել են և պայմանագրերը կնքվել են ՎԶԵԲ-ի գնումների ընթացակարգին համապատասխան թվով չորս պայմանագրերի դեպքում, որոնց ընդհանուր վճարումները կազմել են 4,114,901 ԱՄՆ դոլար և որոնք կնքվել են 2016 թվականին «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից (սկզբնական շրջանում ծրագրի իրականացման համար պատասխանատու կազմակերպություն):

Այս վերապահման պատճառ հանդիսացող խնդիրը լուծվել է, քանի որ մենք ստացել ենք բավարար ապացույցներ ՎԶԵԲ-ի գնումների ընթացակարգի պահպանման վերաբերյալ:

***Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների համար***

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք» ստանդարտի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը :
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն.

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, կեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, բայց ոչ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված ծավալի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 հունվարի 2026թ.
"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր
ԵՆԲ ՎԱՐԿ FI N 82.036, ԵՄ ՀՆԳ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ENPI/2014/346-956
Դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվություն
2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար
*(Գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով)*

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | Ծնթ. | Փաստացի | | | | | | | | | | | | | | | Նախատեսված | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2015-ին ավարտված տարի | 2016-ին ավարտ.-ված տարի | 2017-ին ավարտված տարի | 2018-ին ավարտված տարի | 2019-ին ավարտված տարի | 2020-ին ավարտված տարի | 2021-ին ավարտված տարի | 2022-ին ավարտված տարի | 2023-ին ավարտված տարի | 2024-ին ավարտված տարի | 01/01/2025-ից մինչև 30/09/2025 | Ամփոփ 23/09/2015-ից մինչև 30/09/2025 | 01/10/2025-ից մինչև 31/12/2025 | Ամփոփ 23/09/2015-ից մինչև 31/12/2025 | Փոխարկված ամփոփ ԵՄ ՀՆԳ դրամաշնորհի ENPI/2014/346-956 առ 30.09.2025 | Ամփոփ առ 31/12/2025 | Ամփոփ առ 31/12/2025 |
| | | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | Եվրո | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | 4 | - | - | - | - | 3,305,303 | 3,288,235 | 3,288,235 | 1,965,203 | 1,880,797 | 2,064,665 | 2,279,442 | - | 970,085 | - | - | - | - |
| **Ֆինանսավորման աղբյուրները** | **5** | | | | | | | | | | | | | | | | | |
| ԵՆԲ վարկ FI N 82.036 | | - | - | - | 3,000,000 | - | - | - | - | - | 4,000,000 | - | 7,000,000 | - | 7,000,000 | - | - | - |
| ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ ENPI/2014/346-956 | | - | - | - | 3,080,265 | - | - | - | - | 2,980,226 | - | - | 6,060,491 | - | 6,060,491 | 5,500,000 | - | - |
| Հանած՝ Բանկային վճարներ, ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ ENPI/2014/346-956 | | - | - | - | (129) | - | - | - | - | (22) | - | - | (151) | - | (151) | - | - | - |
| **Ընդամենը ֆինանսավորման աղբյուրներ** | | **-** | **-** | **-** | **6,080,136** | **-** | **-** | **-** | **-** | **2,980,204** | **4,000,000** | **-** | **13,060,340** | **-** | **13,060,340** | **5,500,000** | **-** | **-** |
| ***Միջոցների օգտագործում*** | ***6*** | | | | | | | | | | | | | | | | | |
| *(1)* Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ Ծրագրի Առաջին մասի համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| ԵՆԲ վարկ FI N 82.036 | | - | - | - | 1,387,401 | 8,534 | - | 661,516 | 84,406 | 857,777 | 1,820,428 | 1,230,821 | 6,050,883 | 852,103 | 6,902,986 | - | 7,000,000 | 97,014 |
| Բանկային վճարներ ՝ ԵՆԲ վարկ FI N 82.036 | | - | - | - | 32 | - | - | - | - | | - | - | 32 | - | 32 | - | - | (32) |
| ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ ENPI/2014/346-956 | | - | - | - | 1,387,401 | 8,534 | - | 661,516 | - | 1,938,559 | 1,964,796 | 78,535 | 6,039,340 | 20,677 | 6,060,017 | 5,499,702 | 6,060,340 | 323 |
| **Ընդամենը՝ միջոցների օգտագործում** | | **-** | **-** | **-** | **2,774,833** | **17,067** | **-** | **1,323,032** | **84,406** | **2,796,336** | **3,785,223** | **1,309,356** | **12,090,255** | **872,780** | **12,963,035** | **5,499,702** | **13,060,340** | **97,305** |
| Արտարժույթի գծով օգուտ/վնաս | | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Դրամական միջոցների վերջնական մնացորդ | | - | - | - | *3,305,303* | *3,288,235* | *3,288,235* | *1,965,203* | *1,880,797* | *2,064,665* | *2,279,442* | *970,085* | *970,085* | *97,305* | - | *298* | - | - |

*Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ծրագրի ղեկավարության կողմից 2026թ. հունվարի 30-ին: Կից ծանոթագրությունները սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում:*

Սարգիս Բաղինյան
ՀՏԶՀ Գործադիր Տնօրեն

Կարինե Շահբազյան
Ֆինանսական կառավարման և
հաշվապահական հաշվառման վարչության պետ

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### *1.1. Ծրագիր*

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Հայաստանի Հանրապետության միջև 2013 թվականի հուլիսի 19-ին կնքված վարկային համաձայնագրի (գործառնություն թիվ 43253) համաձայն, Բանկը համաձայնել է Վարկառուին տրամադրել 7,000,000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանն ուղղված ծրագրի համար: Ծրագիրը կիրականացնի «Երևան ջուր» ՓԲԸ-ն: Վարկային համաձայնագրի համաձայն Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ) համաձայնել է համաֆինանսավորել ծրագիրը մինչև 5,500,000 եվրոյի չափով, իսկ Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) համաձայնել է համաֆինանսավորել ծրագիրը մինչև 7,000,000 ԱՄՆ դոլարի չափով: 2016 թվականի սեպտեմբերի 22-ի երկարաձգման մասին նամակով վարկի տրամադրման վերջնաժամկետը 2016 թվականի հոկտեմբերի 12-ից երկարաձգվել է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը:

2015 թվականի հունիսի 11-ին ՎԶԵԲ-ը հաստատեց և համաձայնեց ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամից մինչև 249,988 եվրոյի և ՎԶԵԲ-ի ջրային հիմնադրամից մինչև 249,621 եվրոյի չափով միջոցների տրամադրումը դրամաշնորհի տեսքով (ՎԶԵԲ-ի դրամաշնորհային համաձայնագիր թիվ C30714/EBSF-2013-07-116/C30716/EBWF-2013-07-01), որի ընդհանուր գումարը կազմեց 499,609 եվրո:

ԵՄ-ի (որի անունից հանդես է գալիս Եվրոպական հանձնաժողովը (Հարևանության ներդրումային գործիք (NIF))) և Հայաստանի Հանրապետության (որի անունից հանդես է գալիս Ֆինանսների նախարարությունը) միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ENPI/2014/346-956 ֆինանսավորման համաձայնագրով ԵՄ-ն պարտավորվում է ֆինանսավորել Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրը մինչև 5,500,000 եվրո գումարի չափով: Թիվ 4 լրացուցիչ համաձայնագրով Ծրագրի իրականացման ժամկետը փոփոխվել և կազմում է 122 ամիս ու 2 օր, իսկ վերջնական փուլի տևողությունը կազմում է 12 ամիս:

Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և «Երևան ջուր» ՓԲԸ-ի միջև 2014 թվականի հունիսի 24-ին ստորագրված FI N82.036 ֆինանսական պայմանագրի համաձայն ԵՆԲ-ն «Երևան ջուր» ՓԲԸ-ին տրամադրում է 7,000,000 ԱՄՆ դոլար (5,167,195.69 եվրո)՝ Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրը ֆինանսավորելու համար: Բանկը Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատում է մոտավորապես 14,000,000 ԱՄՆ դոլար գումարած 5,500,000 եվրո, ներառյալ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից տրամադրված 7,000,000 ԱՄՆ դոլարի չափով վարկը, ԵՆԲ-ից տրամադրված 7,000,000 ԱՄՆ դոլար վարկը և Հարևանության ներդրումային գործիքով (ՀՆԳ) տրամադրված 5,500,000 եվրո ներդրումային դրամաշնորհը: 2024 թվականի հունվարի 30-ի թիվ 4 փոփոխության նամակով Ծրագրի միջոցների օգտագործման վերջնական ժամկետը երկարաձգեց մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը, իսկ աշխատանքների ավարտը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

### *1.2. Ծրագրի նպատակները*

Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի ջրամատակարարման ցանցի վերականգնմանը: Սա կնվազեցնի ջրի տեխնիկական կորուստները և կբարելավի ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Ծրագիրը նաև աջակցում է նոր ջրաչափերի տեղադրմանը ջրի տնտեսական կորուստները (անօրինական միացումների և ջրաչափերի հետ մանիպուլյացիաների հետևանքով) նվազեցնելու համար:

### *1.3. Բյուջե*

2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ENPI/2014/346-956 ֆինանսավորման համաձայնագրի համաձայն Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը, ներառյալ ՎԶԵԲ վարկը (գործարքի համար 43253), ԵՆԲ վարկը (FI N 82.036) և ԵՄ ՀՆԳ դրամաշնորհը (ENPI/2014/346-956), կազմում է 16,500,000

եվրո (առանց հարկերի) և ֆինանսավորվում է հետևյալ կերպ.

- ՎԶԵԲ վարկ (գործարքի համար՝ 43253)։ 5,500,000 եվրո (7,000,000 ԱՄՆ դոլար)։
- ԵՆԲ վարկ (FI N 82.036)։ մինչև 7,000,000 ԱՄՆ դոլար (5,500,000 եվրո)։
- ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ (ENPI/2014/346-956)։ 5,500,000 եվրո։

Բացի այդ, 2015 թվականի հունիսի 11-ին ՎԶԵԲ-ը հաստատեց և համաձայնեց ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամից մինչև 249,988 եվրոյի և ՎԶԵԲ-ի ջրային հիմնադրամից մինչև 249,621 եվրոյի չափով միջոցների տրամադրումը դրամաշնորհի տեսքով (ՎԶԵԲ-ի դրամաշնորհային համաձայնագիր թիվ C30714/EBSF-2013-07-116/C30716/EBWF-2013-07-01), որի ընդհանուր գումարը կազմեց 499,609 եվրո։

2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ENPI/2014/346-956 ֆինանսավորման համաձայնագրով ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է.

| | ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ (ENPI/2014/346-956) | ՎԶԵԲ վարկ (գործարքի համար՝ 43253)* | ԵՆԲ վարկ (FI N 82.036)* | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո |
| Կատեգորիաներ | | | | |
| Ջրամատակարարման վերականգնում | 5,166,500 | 5,131,500 | 5,186,500 | 15,484,500 |
| Պոմպերի փոխարինում | 313,500 | 313,500 | 313,500 | 940,500 |
| Նախնական միջնորդավճար | - | 55,000 | - | 55,000 |
| Աուդիտի ծախսեր | 20,000 | - | - | 20,000 |
| **Ընդամենը** | **5,500,000** | **5,500,000** | **5,500,000** | **16,500,000** |

* ՎԶԵԲ-ի վարկը ենթակա չէ աուդիտի (այն շրջանակից դուրս է)։ ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի վճարումները կատարվում են ԱՄՆ դոլարով։

### 1.4. *Ծրագրի իրականացում*

2013 թվականի հուլիսի 19-ին կնքված Վարկային համաձայնագրի (գործարքի համար՝ 43253), 2015 թվականի հունիսի 11-ին կնքված C30714/EBSF-2013-07-116/C30716/EBWF-2013-07-01 դրամաշնորհային պայմանագրի, 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ENPI/2014/346-956 ֆինանսավորման համաձայնագրի և 2014 թվականի հունիսի 24-ին կնքված FI N82.036 ֆինանսական պայմանագրի համաձայն Ծրագիրը կիրականացվի «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսական աջակցությամբ։

«ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ՋՏՊԿ համակարգի վարկային և դոնորային ծրագրերի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման (թիվ 191-Ա առ 23.02.2017թ.) համաձայն պատվիրատուն «Երևան Ջուր» ՓԲԸ-ից փոխվեց էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ԷԲՊՆ) «Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական գործակալության։

ՀՀ կառավարության առ 28.02.19թ. թիվ 170-Ն որոշման համաձայն 2019 թվականի դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՀՀ էներգետիկայի, ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային ռեսուրսների կոմիտեի ջրային ոլորտի ծրագրերի իրականացման հատուկ ստորաբաժանման գործունեությունը, և այս որոշման 2-րդ կետի համաձայն՝ մինչև նշված որոշման ուժի մեջ մտնելը Ջրային ոլորտի ծրագրերի իրականացման հատուկ ստորաբաժանման կողմից կնքված գործող պայմանագրերի հետագա իրականացումը պետք է ստանձնի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)։

ՀՏԶՀ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Կարապետ Ուլնեցի 31։

### 1.5. *Ծրագրի ավարտ*

Ծրագիրն ավարտվել է 2024 թվականի դեկտեմբերի 31-ին («Փակման ամսաթիվ»), իսկ գործարքները՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ին («Հաշվետու ամսաթիվ»):
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման օրվա՝ 2026 թվականի հունվարի 30-ի դրությամբ՝

ա. Փակման ամսաթվից ի վեր Ծրագրի հետ կապված ծախսեր չեն կատարվել:
բ. Հաշվետու ամսաթվից ի վեր ԵՄ ՀՆԳ դրամաշնորհից (ENPI/2014/346-956) կամ ԵՆԲ վարկից (FI N 82.036) որևէ առհանում չի եղել:
գ. Չվճարված կրեդիտորական պարտքեր կամ կանխավճարներ չկան:
դ. Հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդը կազմում է 97,305.18 ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր հաշվի մնացորդը ներկայացված է ստորև:

| | ԵՆԲ վարկ | ՀՆԳ դրամաշնորհ | ՀՆԳ դրամաշնորհ |
|---|---|---|---|
| | Հաշիվ 900000904251 | Հաշիվ 900000904269 | Հաշիվ 900000904269 |
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | Եվրո |
| Ֆինանսավորման աղբյուրներ | 7,000,000 | 6,060,340 | 5,500,000 |
| Ներքին փոխանցում 900000904293 հաշվին | 6,929,378 | 6,060,090 | N/A |
| Ծրագրի գծով ծախսեր | 6,903,018 | 6,060,017 | 5,499,702 |
| Չվճարված մնացորդ | **96,982** | **323** | **298** |

| | Չվճարված մնացորդ | | | | Փոխարկված ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ |
|---|---|---|---|---|---|
| | Հաշիվ 900000904251 | Հաշիվ 900000904269 | Հաշիվ 900000904293 | Ընդամենը | |
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | Եվրո |
| ԵՆԲ վարկ | 70,590.10 | - | 26,392.02 | 96,982.12 | |
| ՀՆԳ դրամաշնորհ | - | 250.00 | 73.06 | 323.06 | 298.09 |
| Ընդամենը | **70,590.10** | **250.00** | **26,465.08** | **97,305.18** | |

ե. Ծրագրի դեմ որևէ դատական գործեր չկան:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### 2.1. *Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով՝ Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

*2.2. Հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունք*

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ միջոցառումները ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամարկղային մեթոդի սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների աղբյուրների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

*2.3. Ներկայացման արժույթ*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

Ծրագրի հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով: Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

- Ներհոսքերի համար օգտագործվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի առքի փոխարժեքը:
- Արտահոսքի համար օգտագործվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի վաճառքի փոխարժեքը:

ԵՄ ՀՆԳ ENPI/2014/346-956 դրամաշնորհի շրջանակներում դրամական միջոցների մուտքերն ու ելքերը ներկայացված են ԱՄՆ դոլարով, իսկ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում դրանք փոխարկվել են եվրոյի:

Ծրագրի համար ԵՄ ՀՆԳ ENPI/2014/346-956 դրամաշնորհի շրջանակներում մուտքերը (հասույթը) ստացվում է եվրոյով:

Սույն Ծրագրի համար ԵՄ ՀՆԳ ENPI/2014/346-956 դրամաշնորհի շրջանակներում դրամով արտահայտված միջոցների արտահոսքերը (ծախսերը) փոխակերպվում են եվրոյի՝ օգտագործելով «առաջին մուտք, առաջին ելք» (FIFO) մեթոդը, որը հիմնված է փոխանցման օրը գանձապետարանի կողմից սահմանված ԱՄՆ դոլար/դրամ օրական առքի և դրամ/եվրո օրական վաճառքի փոխարժեքների, ինչպես նաև համապատասխան ֆինանսավորման գրանցման պահին գործող փոխարժեքի վրա:
ԵՄ ՀՆԳ ENPI/2014/346-956 դրամաշնորհի դրամական միջոցների վերջնական մնացորդը փոխակերպվում է եվրոյի՝ օգտագործելով FIFO մեթոդը:

*2.4. Հարկեր*

Բոլոր համապատասխան հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությանը համապատասխան:

## 3. Հաշվի քաղվածք

**3.1 ԵՄ ՀՆԳ դրամաշնորհի հաշիվ 900000904269**

Բանկի գտնվելու վայրը Կենտրոնական գանձա-պետարան Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, ՀՀ
Արժույթ՝ ԱՄՆ դոլար

| | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2015 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2016 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2017 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2018 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2019 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2020 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2021 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2022 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2023 | ԵՄ ՀՆԳ դրամա-շնորհ 2024 | ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ 30/09/2025 | ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ 31/12/2025 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | - | - | - | - | 780,136 | 780,136 | 780,136 | 780,136 | 780,136 | 2,056,357 | 21,000 | 21,000 |
| Ավելացում՝ | | | | | | | | | | | | |
| ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | 3,080,136 | - | - | - | - | 2,980,204 | - | - | - |
| Ընդամենը մուտք | - | - | - | **3,080,136** | - | - | - | - | **2,980,204** | - | - | - |
| Հանած՝ | | | | | | | | | | | | |
| Ներքին փոխանցում 900000904293 հաշվին | - | - | - | 2,300,000 | - | - | - | - | 1,703,983 | 2,035,357 | - | 20,750 |
| Ընդամենը ելք | - | - | - | **2,300,000** | - | - | - | - | **1,703,983** | **2,035,357** | - | - |
| **Վերջնական մնացորդ** | - | - | - | **780,136** | **780,136** | **780,136** | **780,136** | **780,136** | **2,056,357** | **21,000** | **21,000** | **250** |

**3.2 ԵՆԲ վարկի հաշիվ 900000904251**

Բանկի գտնվելու վայրը Կենտրոնական գանձա-պետարան Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, ՀՀ
Արժույթ՝ ԱՄՆ դոլար

| | ԵՆԲ վարկ 2015 | ԵՆԲ վարկ 2016 | ԵՆԲ վարկ 2017 | ԵՆԲ վարկ 2018 | ԵՆԲ վարկ 2019 | ԵՆԲ վարկ 2020 | ԵՆԲ վարկ 2021 | ԵՆԲ վարկ 2022 | ԵՆԲ վարկ 2023 | ԵՆԲ վարկ 2024 | ԵՆԲ վարկ 30/09/2025 | ԵՆԲ վարկ 31/12/2025 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | - | - | - | - | 699,968 | 699,968 | 699,968 | 699,968 | 699,968 | - | 2,065,929 | 924,892 |
| Ավելացում՝ | | | | | | | | | | | | |
| ԵՆԲ վարկ | - | - | - | 2,998,968 | - | - | - | - | - | 4,000,000 | - | - |
| **Ընդամենը մուտք** | - | - | - | **2,998,968** | - | - | - | - | - | **4,000,000** | - | - |
| Հանած՝ | | | | | | | | | | | | |
| Ներքին փոխանցում 900000904293 հաշվին | - | - | - | 2,300,000 | - | - | - | - | 699,968 | 1,934,071 | 1,141,037 | 854,302 |
| **Ընդամենը ելք** | - | - | - | **2,300,000** | - | - | - | - | **699,968** | **1,934,071** | **1,141,037** | **854,302** |
| **Վերջնական մնացորդ** | - | - | - | 699,968 | **699,968** | **699,968** | **699,968** | **699,968** | - | **2,065,929** | **924,892** | **70,590** |

**3.3 ՀՏԶՀ գործառնական հաշիվ 900000904293**

Բանկի գտնվելու վայրը
Կենտրոնական գանձապետարան
Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010,
Հայաստանի Հանրապետություն,
Արժույթ՝ ԱՄՆ դոլար

| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 30/09/25 | 31/12/25 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | - | - | - | - | 1,825,198 | 1,808,131 | 1,808,131 | 485,099 | 400,692 | 8,308 | 192,513 | 24,193 |
| Ավելացում՝ | | | | | | | | | | | | |
| **ԵՆԲ վարկի հաշիվ** 900000904251 | - | - | - | 2,300,000 | - | - | - | - | 699,968 | 1,934,071 | 1,141,037 | 854,302 |
| **ՀՆԳ դրամաշնորհի հաշիվ** 900000904269 | - | - | - | 2,300,000 | - | - | - | - | 1,703,983 | 2,035,357 | - | 20,750 |
| Ընդամենը մուտք | - | - | - | **4,600,000** | - | - | - | - | **2,403,952** | **3,969,428** | **1,141,037** | **875,052** |
| Հանած՝ | | | | | | | | | | | | |
| Ծրագրային ծախսեր՝ ԵՆԲ վարկ | - | - | - | 1,387,401 | 8,534 | - | 661,516 | 84,406 | 857,777 | 1,820,428 | 1,230,821 | 852,103 |
| Ծրագրային ծախսեր՝ ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | 1,387,401 | 8,534 | - | 661,516 | - | 1,938,559 | 1,964,796 | 78,535 | 20,677 |
| Ընդամենը ելք | - | - | - | **2,774,802** | **17,067** | - | **1,323,032** | **84,406** | **2,796,336** | **3,785,223** | **1,309,356** | **872,780** |
| **Վերջնական մնացորդ** | - | - | - | **1,825,198** | **1,808,131** | **1,808,131** | **485,099** | **400,692** | **8,308** | **192,513** | **24,193** | **26,465** |

## 4. Դրամական միջոցներ

| | Բանկ | Արժույթ | 31.12.15 ԱՄՆ դոլար | 31.12.16 ԱՄՆ դոլար | 31.12.17 ԱՄՆ դոլար | 31.12.18 ԱՄՆ դոլար | 31.12.19 ԱՄՆ դոլար | 31.12.20 ԱՄՆ դոլար | 31.12.21 ԱՄՆ դոլար | 31.12.22 ԱՄՆ դոլար | 31.12.23 ԱՄՆ դոլար | 31.12.24 ԱՄՆ դոլար | 30.09.25 ԱՄՆ դոլար | 31.12.25 ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի հաշիվ 900000904251(ԵՆԲ վարկ FI N 82.036) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | - | - | - | 699,968 | 699,968 | 699,968 | 699,968 | 699,968 | - | 2,065,929 | 924,892 | 70,590 |
| Բարելավումների հաշիվ 900000904269 (ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ ENPI/2014/346-956) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | - | - | - | 780,136 | 780,136 | 780,136 | 780,136 | 780,136 | 2,056,357 | 21,000 | 21,000 | 250 |
| ՀՏԶՀ գործառնական հաշիվ 900000904293 | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | - | - | - | 1,825,199 | 1,808,131 | 1,808,131 | 485,099 | 400,693 | 8,308 | 192,513 | 24,193 | 26,465 |
| Ընդամենը | | | - | - | - | **3,305,303** | **3,288,235** | **3,288,235** | **1,965,203** | **1,880,797** | **2,064,665** | **2,279,442** | **970,085** | **97,305** |

## 5. Ֆինանսավորման աղբյուր (ԵՆԲ վարկ FI N 82.036, ԵՄ ՀՆԳ դրամաշնորհի ENPI/2014/346-956)

### 5.1 ԵՆԲ վարկ FI N 82.036

| | 31.12.15 ԱՄՆ դոլար | 31.12.16 ԱՄՆ դոլար | 31.12.17 ԱՄՆ դոլար | 31.12.18 ԱՄՆ դոլար | 31.12.19 ԱՄՆ դոլար | 31.12.20 ԱՄՆ դոլար | 31.12.21 ԱՄՆ դոլար | 31.12.22 ԱՄՆ դոլար | 31.12.23 ԱՄՆ դոլար | 31.12.24 ԱՄՆ դոլար | 30.09.25 ԱՄՆ դոլար | 31.12.25 ԱՄՆ դոլար | Ամփոփ առ 31.12.25 ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆինանսավորում՝ ԵՆԲ վարկ FI N 82.036 | - | - | - | 3,000,000 | - | - | - | - | - | 4,000,000 | - | - | 7,000,000 |
| Ընդամենը ֆինանս-ավորման բյուջե | | | | | | | | | | | | | 7,000,000 |
| Տրամադրված ֆինանսավորման տոկոսը | | | | | | | | | | | | | 100% |

### 5.2 ԵՄ ՀՆԳ դրամաշնորհի ENPI/2014/346-956

| | 31.12.15 Եվրո | 31.12.16 Եվրո | 31.12.17 Եվրո | 31.12.18 Եվրո | 31.12.19 Եվրո | 31.12.20 Եվրո | 31.12.21 Եվրո | 31.12.22 Եվրո | 31.12.23 Եվրո | 31.12.24 Եվրո | 30.09.25 Եվրո | 31.12.25 Եվրո | Ամփոփ առ 31.12.25 Եվրո |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆինանսավորում՝ ԵՄ ՀՆԳ դրամաշնորհի ENPI/2014/346-956 | 2,750,000 | - | - | - | - | - | - | - | 2,750,000 | - | - | - | 5,500,000 |
| Ընդամենը ֆինանս-սավորման բյուջեն ըստ յուրաքանչյուր պայմանագրի | | | | | | | | | | | | | 5,500,000 |
| Տրամադրված ֆինանսավորման տոկոսը | | | | | | | | | | | | | 100% |

## 6. Միջոցների օգտագործում

ԵՆԲ վարկ FI N 82.036, ԵՄ ՀՆԳ դրամաշնորհ ENPI/2014/346-956

| Կապալառու | Պայմանա-գրի համար | Ֆինան-սավորում | 01.01.2015-ից մինչև 31.12.2015 | 01.01.2016-ից մինչև 31.12.2016 | 01.01.2017-ից մինչև 31.12.2017 | 01.01.2018-ից մինչև 31.12.2018 | 01.01.2019-ից մինչև 31.12.2019 | 01.01.2020-ից մինչև 31.12.2020 | 01.01.2021-ից մինչև 31.12.2021 | 01.01.2022-ից մինչև 31.12.2022 | 01.01.2023-ից մինչև 31.12.2023 | 01.01.2024-ից մինչև 31.12.2024 | 01.01.2025-ից մինչև 30.09.2025 | 01.10.2025-ից մինչև 31.12.2025 | Ամփոփ առ 31.12.2025 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| «Բլեսկ» ՍՊԸ և «ՇՄՇ-23» ԲԲԸ կոնսորցիում | YWIP/KenAjg Wks/09 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | 512,408 | - | - | 249,934 | - | - | - | - | - | 762,342 |
| «Բլեսկ» ՍՊԸ և «ՇՄՇ-23» ԲԲԸ կոնսորցիում | YWIP/KenAjg Wks/09 | ԵՆԲ վարկ | - | - | - | 512,408 | - | - | 249,934 | - | - | - | - | - | 762,342 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ և «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի կոնսորցիում | YWIP/MalHag hSilWks/09-2 LOT2 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | 1,035,557 | 981,215 | - | - | 2,016,771 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ և «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի կոնսորցիում | YWIP/MalHag hSilWks/09-2 LOT2 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 105,396 | - | 105,396 |
| «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ | YWIP/MalHag hSilWks/09-1 LOT 1. | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | 903,002 | 983,581 | 78,535 | - | 1,965,118 |
| «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ | YWIP/MalHag hSilWks/09-1 LOT 1. | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | 305,107 | - | 747,805 | 333,210 | 1,386,123 |
| «ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ | YWIP/KhaWks /11 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ | YWIP/KhaWks /11 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | 205,068 | 525,101 | 308,488 | 479,182 | 1,517,838 |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/01-1 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/01-1 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | 58,093 | - | - | - | - | 58,093 |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/01-2 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/01-2 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | 13,866 | 76,855 | 33,806 | 28,788 | 153,315 |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/02-1 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/02-1 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | 26,314 | - | - | - | - | 26,314 |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCon s/02-2 | ՀՆԳ դրամա-շնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/02-2 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | - | 65,773 | 1,209 | - | 66,982 |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/03 | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/03 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | - | 102,591 | 34,116 | 10,923 | 147,630 |
| «Ֆոր Դիրեքշնս» ՍՊԸ - Ագատ-777 ՍՊԸ համատեղ ձեռնարկություն | YWIP/AraKanWks/05 | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | 332,881 | - | - | 120,925 | - | - | - | - | - | 453,806 |
| «Ֆոր Դիրեքշնս» ՍՊԸ - Ագատ-777 ՍՊԸ համատեղ ձեռնարկություն | YWIP/AraKanWks/05 | ԵՆԲ վարկ | - | - | - | 332,881 | - | - | 120,925 | - | - | - | - | - | 453,806 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի, «Գավաթ» ՍՊԸ-ի և «Բեղեկ» ՍՊԸ-ի համատեղ ձեռնարկություն | YWIP/ErebuniWks/06 | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | 542,111 | - | - | 282,260 | - | - | - | - | - | 824,371 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի, «Գավաթ» ՍՊԸ-ի և «Բեղեկ» ՍՊԸ-ի համատեղ ձեռնարկություն | YWIP/ErebuniWks/06 | ԵՆԲ վարկ | - | - | - | 542,112 | - | - | 282,260 | - | - | - | - | - | 824,372 |
| «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի և «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի համատեղ ձեռնարկություն | YWIP/AraWks/10 | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի և «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի համատեղ ձեռնարկություն | YWIP/AraWks/10 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | - | - | - | - | 333,736 | 1,050,108 | - | - | 1,383,845 |
| «Շահարթ և Պրոմ Սինթեզ» ՍՊԸ | Lot 3 - YWIP/WMChambSupp/04 | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | - | 8,534 | - | 8,397 | - | - | - | - | - | 16,931 |
| «Շահարթ և Պրոմ Սինթեզ» ՍՊԸ | Lot 3 - YWIP/WMChambSupp/04 | ԵՆԲ վարկ | - | - | - | - | 8,534 | - | 8,397 | - | - | - | - | - | 16,931 |
| «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | Աուդիտ | ՀՆԳ դրամաշնորհ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 20,677 | 20,677 |
| Ընդամենը | | | - | - | - | 2,774,801 | 17,068 | - | 1,323,032 | 84,407 | 2,796,336 | 3,785,224 | 1,309,356 | 872,780 | 12,963,002 |

## ԵՄ ՀՆԴ դրամաշնորհ ENPI/2014/346 956. Եվրոյով փոխարկված միջոցների օգտագործումը

| Կապալառու | Պայմանագրի համար | 01.01.2015-ից մինչև 31.12.2015 | 01.01.2016-ից մինչև 31.12.2016 | 01.01.2017-ից մինչև 31.12.2017 | 01.01.2018-ից մինչև 31.12.2018 | 01.01.2019-ից մինչև 31.12.2019 | 01.01.2020-ից մինչև 31.12.2020 | 01.01.2021-ից մինչև 31.12.2021 | 01.01.2022-ից մինչև 31.12.2022 | 01.01.2023-ից մինչև 31.12.2023 | 01.01.2024-ից մինչև 31.12.2024 | 01.01.2025-ից մինչև 30.09.2025 | 01.10.2025-ից մինչև 31.12.2025 | Ամփոփ առ 31.12.2025 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո | Եվրո |
| «Բլեսկ» ՍՊԸ և «ՇՄՇ-23» ԲԲԸ կոնսորցիում | YWIP/KenAjgWks/09 | - | - | - | 457,468 | - | - | 223,136 | - | - | - | - | - | 680,604 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ և «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի կոնսորցիում | YWIP/MalHaghSilWks/09-2 LOT2 | - | - | - | - | - | - | - | - | 940,099 | 905,415 | - | - | 1,845,514 |
| «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ | YWIP/MalHaghSilWks/09-1 LOT 1. | - | - | - | - | - | - | - | - | 818,055 | 907,598 | 72,468 | - | 1,798,121 |
| «ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ | YWIP/KhaWks/11 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/01-1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/01-2 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/02-1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/02-2 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «ՋԻՆՋ» ՍՊԸ | YWIP/UpdCons/03 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «Փոր Դիրեքշնս» ՍՊԸ - Ազատ-777 ՍՊԸ ՀՁ | YWIP/AraKanWks/05 | - | - | - | 297,189 | - | - | 107,960 | - | - | - | - | - | 405,149 |
| «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի, «Գավառ» ՍՊԸ-ի և «Բեդեկ» ՍՊԸ-ի ՀՁ | YWIP/ErebuniWks/06 | - | - | - | 483,987 | - | - | 251,996 | - | - | - | - | - | 735,983 |
| «ԲԵԴԵԿ» ՍՊԸ-ի և «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի ՀՁ | YWIP/AraWks/10 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| «Շահարք և Պրոմ Սինթեզ» ՍՊԸ | Lot 3 - YWIP/WMChambSupp/04 | - | - | - | - | 7,619 | - | 7,497 | - | - | - | - | - | 15,116 |
| **«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ** | Աուդիտ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 19,080 | 19,080 |
| **Բանկային վճարներ** | | 115 | - | - | - | - | - | - | - | 20 | - | - | - | 135 |
| Ընդամենը | | 115 | - | - | 1,238,644 | 7,619 | - | 590,589 | - | 1,758,174 | 1,813,013 | 72,468 | 19,080 | 5,499,702 |